ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐԳԱՀԱՆ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՄԻՐԶՈՅԵԱՆ

Փառք Բարձրեալին, որ հայոց համազգային մկրտութեան եւ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի փօնազարդ տարում համայն մեր ժողովուրդը բազում առիթներ ունեցաւ նշելու նաեւ արժանաւոր իր զաւակների յոբելեանները:

Մեծարգոյ ՝պրն Միրզոյեան. հոգու բերկրանքով ողջունում եւ սիրով ու բարեմաղթանքներով շնորհաւորում ենք Ձեզ Ձեր ծննդեան 80-ամեայ տարեդարձի առիթով:

Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր յոբելեանը Դուք դիմաւորում էք տարիների վաստակով ծանրաբեռն, երախտագէտ մեր ժողովրդից սիրուած ու մեծարուած, ազատ ու անկախ Հայաստանի հայրենի պետութեան գնահատանքին արժանացած:

Տաղանդաշատ երգահանի Ձեր անունը լայնօրէն ծանօթ է երաժշտասէր հասարակայնութեանը ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս եւ նրա սահմաններից հեռու: Ձեր ստեղծագործութիւնները հայկականութեան շնչով, բարձրարուեստ երաժշտութեան անդիմադրելի զօրութեամբ թափանցում են մարդկային հոգու խորքերը եւ հաստատւում այնտեղ սիրոյ, բարու, յոյսի ու լաւատեսութեան ապրումներով: Տասնամեակներ շարունակ երաժշտի Ձեր կարողութիւնները, ճաշակն ու փորձառութիւնը Դուք անմնացորդ ու անսակարկ նուիրումով փոխանցել էք երիտասարդներին՝ կրթելով ու զօրացնելով նրանց հոգիներում հաւատարմութիւնը արուեստին, սէրը հանդէպ հայրենի երգն ու երաժշտութիւնը եւ հաւատ սերմանելով կեանքի ու մարդու նկատմամբ, որը մեր ժողովրդի քրիստոնէական մտածողութեան արտայայտութիւնն է:

Ամենայն հայոց 1700-ամեայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով՝ առ ի գնահատութիւն Ձեր վաստակի, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր հոգեբուխ աղօթքն է, որ Տէրը հանապազ Իր խնամքի ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգեւելով երջանկութեամբ լեցուն երկար օրեր, ստեղծագործական անսպառ ոգի ու ներշնչանք, նոր յաջողութիւններ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մենջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Յուլիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 56